ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 28-ԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ (ԶՖԳ) ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՊՐՈՊԱՐԿՈ) ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 10 դեկտեմբերի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Սիմոնյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց 2018 թվականի մայիսի 28-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև Հայաստանում Զարգացման

ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2021 թվականի ապրիլի 15-ի N 575-Ա որոշմամբ «2018 թվականի մայիսի 28-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (ՊՐՈՊԱՐԿՈ) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր) ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2021 թվականի ապրիլի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի հուլիսի 2-ի ՍԴԱՈ-131 աշխատակարգային որոշմամբ նշված գործի վարույթը կասեցվել է: Համաձայնագրի որոշ դրույթների, դրանց կիրառման կարգի և հնարավոր հետևանքների վերաբերյալ հարցումներ են ուղղվել Կենտրոնական բանկին, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին և Էկոնոմիկայի նախարարությանը: Հարցումների պատասխաններն ստանալուց և ուսումնասիրելուց հետո Սահմանադրական դատարանն իր՝ 2021թ. դեկտեմբերի 3-ի ՍԴԱՈ-244 աշխատակարգային որոշմամբ վերսկսել է գործի վարույթը՝ դատաքննությունը նշանակելով 2021 թվականի դեկտեմբերի 10-ին:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, նշված համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և

մասնակցության ընկերության (Պրոպարկո) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի մայիսի 28-ին Երևան քաղաքում՝ նպատակ ունենալով հստակեցնելու ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի՝ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրման, ինչպես նաև դրանց գործունեության նկատմամբ կիրառելի կանոնները, մասնավորապես՝ իրավաբանական, հարկային, ֆինանսական կամ այլ պայմանները՝ Համաձայնագրի, Կողմերի պետությունների օրենսդրության և համապատասխան միջազգային պարտավորությունների համաձայն:

2. Ըստ Համաձայնագրի՝ ԶՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն՝ որպես ԶՖԳ-ի՝ մասնավոր սեկտորի զարգացման ֆինանսավորման ոլորտում մասնագիտացված մասնաճյուղ, այսուհետ հիմնադրվելու և գործունեություն են ծավալելու Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ցուցաբերելով իրենց ֆինանսական և տեխնիկական աջակցությունը՝ Հայաստանի տնտեսական, քաղաքական և սոցիալական զարգացման նպատակներին համապատասխան և գործելով անկախության, ինքնորոշման, ներքին գործերին չմիջամտելու, իրավահավասարության սկզբունքները հարգելու հիման վրա:

ԶՖԳ-ն ֆրանսիական դրամավարկային և ֆինանսական օրենսգրքի կանոնակարգային հիմնադրույթներով ղեկավարվող առևտրային և արդյունաբերական բնույթի պետական հաստատություն է, որը հիմնականում գործում է ընդունող պետության ներդրումային գերակա ծրագրերի շրջանակում՝ պետությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին և պետական կամ մասնավոր ձեռնարկություններին կամ ֆինանսական հաստատություններին տրամադրված դրամաշնորհների, երկարաժամկետ վարկերի և երաշխիքներին միջոցով, կամ իր գործունեության շրջանակում գործող ձեռնարկություններում մասնակցություն ունենալու ձևով, ինչպես նաև առաջարկում է խորհրդատվական, վերապատրաստման և տեխնիկական աջակցության ծառայությունների տրամադրում:

ՊՐՈՊԱՐԿՈ-ն 1977 թվականին ֆրանսիական իրավունքի հիման վրա ստեղծված զարգացման ֆինանսական ընկերություն է, որը տնօրինվում է գլխավորապես ԶՖԳ-ի կողմից: Հայաստանի Հանրապետության Կառավարության և ԶՖԳ-ի միջև

2016 թվականի հունվարի 26-ին ստորագրվել է վարկային համաձայնագիր (ԱԺ կողմից վավերացվել է 2016 թվականի մայիսի 12-ին (ՍԴՈ-1269): Վերոնշյալ համաձայնագրի կապակցությամբ Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ շեշտել է, որ «...Զարգացման ֆրանսիական գործակալությունը պետական մարմին է: Այդ մարմնի Կանոնադրությունը ներառված է 2014 թվականի նոյեմբերի 3-ի խմբագրությամբ Ֆրանսիայի Դրամային և ֆինանսական օրենսգրքում: Օրենսգրքի R513-22 հոդվածով սահմանվում է, որ Զարգացման ֆրանսիական գործակալությունը պետական հանրային արդյունաբերական և առևտրային կազմակերպություն է: Այդ կազմակերպության Կանոնադրության ուսումնասիրությունը վկայում է, որ այն հանդիսանում է հանրային իրավունքի իրավաբանական անձ և կարող է հանդես գալ ինչպես պետության անունից, այնպես էլ որպես միջազգային մասնավոր իրավունքի սուբյեկտ»:

ՊՐՈՊԱՐԿՈ-ի հիմնական նպատակն է օժանդակել մասնավոր ներդրումներին թույլ զարգացած և զարգացող երկրներում՝ ի նպաստ աճի, կայուն զարգացման և կայուն զարգացման նպատակների իրագործման:

3. Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործունեությունը և գործողությունները համարվում են նախապատրաստված, որոշված և իրականացված Ֆրանսիայի Հանրապետությունում տեղակայված գլխամասային գրասենյակից:

4. Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրով ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

4.1. ԶՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն օգտվելու են Հայաստանի Հանրապետությունում իրենց գործունեությունն իրականացնելու համար անհրաժեշտ իրավաբանական անձի կարգավիճակից և իրավունակությունից՝ ունենալով հնարավորություն՝ իրականացնելու Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված գործառույթները, որոնք մասնավորապես ներառում են անհրաժեշտ ցանկացած գործունեության իրականացում՝ Համաձայնագրում սահմանված իրենց առաքելությունն իրականաց-

նելու համար, ցանկացած անշարժ և շարժական գույքի ձեռքբերում և տնօրինում (բացառությամբ հողի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան), բանակցությունների վարում և ցանկացած համաձայնագրի կամ պայմանագրի կնքում, այդ թվում՝ Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված իրենց թույլատրելի գործունեության շրջանակներում, Հայաստանի Հանրապետության Կառավարության կամ պետական կամ մասնավոր կառույցների կողմից տրամադրված ցանկացած տեսակի երաշխիքի կամ պարտավորությունների կատարման ապահովման ընդունում, Հայաստանի Հանրապետության, Ֆրանսիայի Հանրապետության կամ այլ պետության քաղաքացիությամբ անձնակազմի աշխատանքի ընդունում, ինչպես նաև հանդես գալը դատարաններում որպես հայցվոր կամ պատասխանող, ցանկացած այլ դատական ատյանների, արբիտրաժի կամ իշխանության առջև՝ իրենց կարգավիճակին և ֆրանսիական կիրառելի օրենսդրությանը համապատասխան և հայկական ցանկացած հաստատության կամ մարմնի առջև ցանկացած վարչական ընթացակարգի նախաձեռնում կամ մասնակցություն (Հոդված 2):

4.2. Համաձայնագրի դրույթների համաձայն՝ ԶՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին թույլատրել տրամադրել ֆինանսական օժանդակություն եվրոյով, ԱՄՆ դոլարով կամ ցանկացած այլ արտարժույթով, և ֆինանսական կամ տեխնիկական ցանկացած աջակցություն ցուցաբերել Հայաստանի Հանրապետության Կառավարությանը, պետական կամ մասնավոր ձեռնարկություններին և պետական կամ մասնավոր ֆինանսական կամ բանկային հաստատություններին, ինչպես նաև հայկական կամ միջազգային հանրային կամ մասնավոր կազմակերպություններին և գլխավորապես Հայաստանի Հանրապետությունում գործող կամ տեղակայված ցանկացած իրավաբանական միավորի, որն առնչություն ունի ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի որևէ գործունեության հետ՝ նկատի ունենալով, որ միջազգային կազմակերպությունների դեպքում անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության Կառավարության համաձայնությունը (Հոդված 3, կետ 1(a):

4.3. Համաձայնագրի դրույթների համաձայն՝ ԶՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին թույլատրվում է ազատորեն ձեռք բերել հայկական կամ օտարերկրյա վաճառողներից ցանկացած ընկերության կապիտալում մասնակցությունը (անկախ դրանց կազմա-

կերպչական ձևից), ներդրումներ կատարել ներդրումային ֆոնդերում և ազատորեն տնօրինել կամ փոխանցել իրենց մասնաբաժինները կամ մասնակցությունը ազգային կամ օտարերկրյա ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, բացառությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ որևէ ֆինանսական կազմակերպության կապիտալում մասնակցության համար պահանջվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախնական թույլտվությունը (Հոդված 3, կետ 1(b):

4.4. Համաձայնագրի դրույթների համաձայն՝ ԶՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին թույլատրվում է իրականացնել խորհրդատվական, տեխնիկական օժանդակության, վերապատրաստման կամ ուսուցման ծառայություններ պետական կամ մասնավոր կառույցների համար (Հոդված 3, կետ 1(c):

4.5. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված գործունեությունից յուրաքանչյուրը կարգավորվում է հատուկ պայմանագրով կամ համապատասխան կառույցի պարտավորություններն ու հանձնառություններն սահմանելով՝ ըստ կոնկրետ գործունեության կամ գործողության տեսակի, ընդ որում՝ Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է անհրաժեշտ ջանքեր գործադրել նշված պայմանագրի վավերականությունը կամ ուժի մեջ մտնելը ապահովելու համար պահանջվող հնարավոր ընթացակարգերը հեշտացնելու համար (Հոդված 3, կետ 2):

4.6. Համաձայնագրով նախատեսված է, որ առանց հակասելու Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1(b) կետին, Համաձայնագրի 2-րդ և 3-րդ հոդվածներով սահմանված ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործունեության իրականացման համար չպահանջել օրենսդրական, կանոնակարգող կամ վարչական բնույթի թույլտվություններ, արտոնագրեր կամ լիցենզիաներ Հայաստանի Հանրապետությունում ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի նշված գործունեությունը գործարկելու և իրականացնելու համար (Հոդված 3, կետ 3):

4.7. ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործունեության իրականացման համար Համաձայնագրի շրջանակներում ծրագրերը և համաձայնությունները կարող են ենթակա լինել ֆրանսիական օրենսդրությանը կամ ֆրանսիական դատարանի իրավազորությանը կամ միջազգային արբիտրաժային դատարանի կամ որևէ այլ՝ վեճերի լուծման համար

փոխադարձաբար համաձայնեցված մարմնի իրավազորությանը, և Կողմերի կողմից լիովին ընդունվեն կայացված վճիռը կամ որոշումները՝ ապահովելով դրանց կատարումը Հայաստանի Հանրապետությունում (Հոդված 3, կետ 4):

4.8. Ըստ Համաձայնագրի՝ ԶՖԳ-ն, ՊՐՈՊԱՐԿՈ-ն և Համաձայնագրի 7-րդ հոդվածում նշված դրանց ներկայացուցչությունները Հայաստանի Հանրապետությունում չունեն բանկի կամ այլ ֆինանսական հաստատության կարգավիճակ: Ուստի՝ դրանք «չեն ենթարկվում ոչ բանկային ոլորտը կանոնակարգող օրենսդրության դրույթներին, ոչ էլ Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված կամ գործող ցանկացած տեսակի բանկերի կամ ֆինանսական հաստատությունների նկատմամբ կիրառելի օրենսդրությանը» (Հոդված 4, կետ 2):

4.9. Հայաստանի Հանրապետության տարածքում ԶՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն ազատվում են որևէ ծանուցման կամ հաշվետվությունների ներկայացման պարտավորությունից, բանկային ցանկացած թույլտվություն կամ լիցենզիա ունենալուց, ռիսկերի կառավարման հարցերով որևէ պարտավորությունից, նախազգուշական (պրուդենցիալ) որևէ պարտավորությունից, իրենց պարտքերն ու պահանջները դասակարգելու որևէ պարտավորությունից և այդ պարտքերն ու պահանջները մարելու համար պահուստներ ստեղծելուց, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և կանոնակարգերից բխող որևէ վարչական պարտավորությունից կամ պարտականությունից, բացառությամբ վճարային հաշվեկշռի հաստատման համար անհրաժեշտ տեղեկությունների տրամադրման և բանկային ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության կենտրոնացման (Հոդված 4, կետ 3):

4.10. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի ֆինանսավորման ցանկացած շահառուին կամ այդ ֆինանսավորման ցանկացած երաշխավորին (չհակասելով երաշխիքի կամ պարտապանի գույքով ապահովման ձևին), դրամական միջոցներ փոխանցող ցանկացած հայկական կամ արտասահմանյան միջնորդ բանկին, ինչպես նաև ԶՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին թույլատրում է փոխարկել ցանկացած արտարժույթի՝ փոխարկող գործակալության և դրամական միջոցների սեփականատիրոջ միջև համաձայնեցված փոխարժեքով կամ արտարժույթի համապատասխան փոխարկման օրը Հայաստանի Հանրապետության

Կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքով, և Հայաստանի Հանրապետության տարածքից անարգել, առանց սահմանափակման կամ նախնական ձևակերպումների փոխանցել ԶՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին հասանելիք գումարները, մասնավորապես (առանց սահմանափակման)՝ ֆինանսավորումների մարման գումարները՝ ինչպես մայր գումարը, այնպես էլ տոկոսները, ուշացման դիմաց տոկոսները, լրացուցիչ ծախսերը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի գործունեության արդյունքում գոյացած այլ գումարները (այդ թվում՝ երաշխիքները և գրավադրման իրավունքը) (Հոդված 5, կետ 1):

4.11. ԶՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին թույլատրել ցանկացած արտարժույթով բանկային հաշիվներ ունենալ Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև փոխարկել արտարժույթի՝ փոխարկող գործակալության և դրամական միջոցների սեփականատիրոջ միջև համաձայնեցված փոխարժեքով կամ արտարժույթի համապատասխան փոխարկման օրը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքով, և Հայաստանի Հանրապետության տարածքից անարգել, առանց սահմանափակման կամ նախնական ձևակերպումների փոխանցել մասնաբաժինների կամ անշարժ կամ շարժական գույքի վաճառքից գոյացած գումարներ, շահաբաժիններ և ցանկացած այլ օգուտ, կապիտալի աճ (հավելաճ), իրացման արտադրանք և ընդհանրապես ցանկացած եկամուտ, միջնորդավճար կամ ցանկացած բնույթի ֆոնդեր, ներառյալ, մասնավորապես՝ դատարանի վճռից կամ արբիտրաժի որոշումից բխող վնասների փոխհատուցումը, և տոկոսները, երբ այդ գումարները հիմնականում գոյանում են Հայաստանի Հանրապետությունում ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի կատարած ներդրումներից կամ ցանկացած այլ գործունեությունից կամ դրանց հետ կապված կամ դրանց իրացման արդյունքում. վերոհիշյալ գործունեությունն իրականացվում է Կողմերից յուրաքանչյուրի միջազգային պարտավորություններին համապատասխան (Հոդված 5, կետ 2):

4.12. ԶՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին թույլատրել անհրաժեշտության դեպքում փոխառության կամ այլ ֆինանսական գործողության, փոխարկման կամ վարկի տեսքով ուղղակի վճարումներ կատարել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող մատակարարներին կամ շահագրգիռ փոխառուի կամ շահառուի

համակատարողներին, երբ դրանք օգտագործվում են Հայաստանի Հանրապետությունից դուրս ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու համար, ինչպես նաև օգտվել իրենց վարկերը մարելու նպատակով ուղղակի փոխհատուցումից Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող արտարժույթի միջոցով, երբ դա անհրաժեշտ է (Հոդված 5, կետ 3):

4.13. Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված և գործող բանկերին թույլատրել փոխարկել ՀՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի պարտապաններից ստացած հայկական դրամը (AMD) ցանկացած արտարժույթի՝ փոխարկման գործակալության և դրամական միջոցների սեփականատիրոջ միջև համաձայնեցված փոխարժեքով կամ արտարժույթի համապատասխան փոխարկման օրը տվյալ բանկի կամ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով, ինչպես նաև թույլատրել այդ արտարժույթը փոխանցել ՀՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի արտասահմանյան բանկային հաշիվներին (մասնավորապես՝ Ֆրանսիայի Հանրապետությունում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում) (Հոդված 5, կետ 4):

4.14. Այն դեպքում, երբ հայկական բանկերը կհրաժարվեն կատարել արտարժույթի փոխարկում կամ փոխանցում կամ չեն ունենա բավարար չափով արտարժույթ այդ գործողությունները կատարելու համար կամ այն դեպքում, երբ որևէ այլ պատճառով բանկերին չեն թույլատրվի ՀՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին պատկանող հայկական դրամը (AMD) փոխարկել և այն փոխանցել արտասահման, Հայաստանի Հանրապետության Կառավարությունն (Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի միջոցով) իր լիազորությունների շրջանակներում և հայկական օրենսդրությանը համապատասխան, դյուրացնի նշված հայկական դրամի (AMD) փոխարկումը արտարժույթի՝ այդ բանկերի կողմից կամ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից համապատասխան փոխարկման օրվա դրությամբ հրապարակված կիրառելի փոխարժեքով, որպեսզի դրանք իրականացնեն ՀՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի արտասահմանյան բանկային հաշիվներին փոխանցումները (Հոդված 5, կետ 5):

4.15. Հայաստանի Հանրապետությունը պետք է կրի հարկային բեռը կամ ազատի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկե-

ից, տուրքերից կամ վճարումներից (ինչպիսիք են, բայց չսահմանափակվելով հետևյալով՝ մաքսատուրքեր, ավելացված արժեքի հարկ և աղբյուրի մոտ գանձվող հարկեր) ՀՖԳ-ի կողմից Հայաստանի Հանրապետության Կառավարության հետ իրականացվող միջոցառումները, առանց հակասելու Համաձայնագրի 6-րդ հոդվածի 4-րդ կետին, այն գործունեության նկատմամբ, որոնք նշված են Համաձայնագրի 2-րդ և 3-րդ հոդվածներում և ամեն դեպքում իրականացվում են Համաձայնագրի շրջանակներում (Հոդված 6, կետ 1): Համաձայնագրով նախատեսված վերոբերյալ ազատումը կիրառվում է *inter alia*, ՀՖԳ-ի կողմից իր ցուցաբերած օժանդակության շրջանակներում (պետական կամ մասնավոր կառույցներին) ձեռք բերված արտադրանքների և գործիքների նկատմամբ (օրինակ՝ տոկոսներ, կոմիսիոն վճարներ, հնարավոր փոխհատուցումներ, շահութաբաժիններ, որպես ընկերության ղեկավար ստացած վարձատրություններ կամ բաժնեմասերի մասնակցության փոխանցումներից ստացված հավելավճարներ), անկախ նրանից՝ դրանք վերաբերում են վարկերին (այդ թվում՝ ռիսկի ենթամասնակցություն), թե օժանդակության տեսքով կապիտալիում մասնակցությանը կամ քվազի սեփականություն հանդիսացող ֆինանսական միջոցներին (ինչպիսիք են՝ բաժնետերերի փոխարկելի պարտատոմսեր, բաժնետիրական ընթացիկ հաշիվներ, մասնակցության փոխատվություններ, ստորադաս փոխատվություններ) կամ տրված երաշխիքներին (Հոդված 6, կետ 2):

4.16. ՀՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի օգտին կատարված փաստացի, անհատական կամ այլ ապահովումները, ինչպես նաև ՀՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի կողմից օգտագործվող անշարժ գույքի վարձակալության, վարկային պայմանագրի լիզինգի, կառավարման և փոխանցման գործարքները ազատել բոլոր տուրքերից, հարկերից, գրանցման վճարներից և այլ հարկերից և կոմիսիոն վճարներից, որոնք վճարվում են ՀՀ համապատասխան մարմիններին, ներառյալ հիպոտեքի գրանցման հայկական մարմնին կամ դրա համարժեք մարմնին (Հոդված 6, կետ 3):

4.17. Ապահովել, որ ՀՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին տոկոսներ, շահաբաժիններ, կոմիսիոն վճարներ, հոնորարներ կամ որևէ այլ գումար վճարող պետական կամ մասնավոր ոչ մի կառույց չպահանջի ՀՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին վճարվելիք գումարներից որևէ հարկի կամ որևէ այլ վճարի պահում կամ նվազեցում (Հոդված 6, կետ 4),

քանի որ ԶՖԳ-ն և ՊՐՈՊԱՐԿՈ-ն ազատված են Հայաստանի Հանրապետությունում աղբյուրի մոտ գանձվող բոլոր հարկերից:

4.18. ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի միասնական կամ առանձնացված Ներկայացուցչությունները գրանցվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում (Հոդված 7, կետ 1):

4.19. Համաձայնագրով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է դյուրացնել նշյալ կազմակերպությունների Ներկայացուցչության(ների) բացումը և գործունեությունը Համաձայնագրի պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի վրա չտարածել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը (Հոդված 7, կետ 7(a):

4.20. Հայաստանի Հանրապետությունում գրանցված Ներկայացուցչություններին տալ Համաձայնագրի 7-րդ հոդվածի 7-րդ կետում շարադրված դյուրացումները, արտոնությունները և անձեռնմխելիությունը (Հոդված 7, կետ 7), մասնավորապես՝

ա) Ներկայացուցչության գործունեության համար անհրաժեշտ ներմուծված կամ ձեռք բերված սարքավորումների համար բոլոր հարկերից, տուրքերից և վճարներից (ներառյալ՝ ԱԱՀ կամ համարժեք հարկերը) ազատում,

բ) Ներկայացուցչությանը պատկանող շարժական և անշարժ գույքի դատական կամ վարչական իրավազորության, բռնագրավման, առգրավման կամ հարկադիր կատարման կամ ցանկացած այլ միջամտության ձևից անձեռնմխելիություն,

գ) հանրության գերակա շահերից ելնելով՝ միջոցներ ձեռնարկելու կամ գործողություն կատարելու դեպքում ԶՖԳ-ին և ՊՐՈՊԱՐԿՈ-ին հատկացնել նախնական համարժեք փոխհատուցում ազատ փոխարկելի արտարժույթով:

4.21. Համաձայնագրով նախատեսվում են ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի արտագնա և հայկական աշխատակիցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն գործուղված ժամանակավոր առաքելությունների ու նշանակված խորհրդատուների կարգավիճակի առանձնահատկությունները (Հոդվածներ 8, 9, 10): Արտագնա աշխատակիցներին վերաբերող հիմնական դյուրացումներից ու արտոնություններից են հետևյալները՝

ա) նրանք օգտվում են ֆրանսիական սոցիալական ապահովության համակարգի բժշկական և կենսաթոշակային ապահովագրությունից, հետևաբար նրանց նկատ-

մամբ այս ոլորտում չի կիրառվելու Հայաստանի Հանրապետությունում գործող կարգը, մասնավորապես՝ ազատվելու են հայկական սոցիալական ապահովության համակարգի շրջանակներում գործատուների կողմից սովորաբար կատարվող սոցիալական վճարումներից (Հոդված 8, կետ 2),

բ) նրանց Հայաստանի Հանրապետության տարածքում տրամադրվում է հարկերից, ներմուծման և այլ տուրքերից ազատում, արտոնություններ և առավելություններ, մասնավորապես՝ արտագնա աշխատակիցներին և նրանց ընտանիքների անդամներին տրամադրվում են Համաձայնագրի 8-րդ հոդվածի 4-րդ կետում շարադրված առավելություններն ու արտոնությունները (Հոդված 8, կետ 4),

գ) արտագնա աշխատակիցների և նրանց ընտանիքների այն անդամների մուտքը, կեցությունը, բնակության իրավունքը, տեղաշարժվելու ազատությունը և ելքը, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրվել է կացության հատուկ քարտ, հեշտացվում է (Հոդված 8, կետ 3):

ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի հայկական աշխատակիցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն գործուղված ժամանակավոր առաքելությունների ու նշանակված խորհրդատուների նկատմամբ հիմնականում չեն կիրառվելու արտագնա աշխատակիցների համար սահմանված արտոնություններն ու ազատությունները, բացառությամբ Համաձայնագրի 8-րդ հոդվածի 4 (f) կետում նշված անձեռնմխելիության, որը կիրառելի է ԶՖԳ-ի և ՊՐՈՊԱՐԿՈ-ի կողմից իրենց աշխատակիցներին հանձնարարված առաքելությունների համատեքստում (Հոդված 9, կետ 2, հոդված 10, կետ 4):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2018 թվականի մայիսի 28-ին Երևան քաղաքում ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև Հայաստանում Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Տնտեսական համագործակցության խթանման և մասնակցության ընկերության (Պրոպարկո) հիմնադրման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

10 դեկտեմբերի 2021 թվականի
ՍԴՈ-1620